



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏ**

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2021թ.

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ս.ՊԱՊԻԿՅԱՆԻՆ**

Ի կատարումն Ձեր 27.01.2021թ թիվ ՍՊ/14.1/1675-2021 հանձնարարականի՝
Հարգելի՛ պարոն Պապիկյան,

Տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարության 23.05.2019թ. N646-Ա որոշմամբ «Նյու Իդա» ՍՊԸ-ին Ստեփանավան խոշորացված համայնքի Կաթնաղբյուր բնակավայրում հատկացվել է 2,7 հա ընդհանուր մակերեսով հողամաս, հանքային ջրի արդյունահանման և շշալցման գործարան կառուցելու նպատակով:

«Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում ՍՊԸ-ի և Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության) միջև 25.04.2019թ. կնքվել է թիվ Պ599 ընդերքօգտագործման պայմանագիր: Պայմանագրի 3-րդ հավելվածով «Նյու Իդա» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություններ՝ ուղղված ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում առաջնահերթ խնդիրների լուծմանը: 2020թ. փետրվարի 7-ին կնքված պայմանագրով «Նյու Իդա» ՍՊԸ-ն 1.000.000 ՀՀ դրամի չափով աջակցություն է տրամադրել Կաթնաղբյուր բնակավայրի միջնակարգ դպրոցին՝ թվով 12 լուսամուտների փոխարինման նպատակով:

Համավարակով պայմանավորված ներդրումային ծրագրի իրականացման աշխատանքները դադարեցված են, սակայն ընկերությունը մարզպետարանի հետ քննարկել է մարզի որևէ հատվածում արտադրամասի վարձակալման ու մաքուր ջրի շշալցման տարբերակը՝ մինչ գործարանի կառուցումը:

Առդիր՝ 1 ֆայլ:

2/2/2021

X 

ԱՐԱՄ ԽԱԿՈԿՅԱՆ

Հարգանքով՝

Ա.Խաչատրյան

